

ամէն կերպ աջակցել Թորոսովիչին՝ նրա բոլոր ձեռնարկութիւններէ մէջ :

Թորոսովիչի կողմից եկեղեցիները բռնի կերպով գրաւելու դէմ հայ համայնքը Լվովի քաղաքացիական դատարանում դատ բաց արաւ՝ հիմնուելով լեհ թագաւորներէ, ի թիւս որոնց եւ Սիգիզմունդ Գ. ի տուած մի շարք առանձնաշնորհումներէ վրայ, որոնցով արտօնուած էր ազատօրէն դաւանել իրենց կրօնը : Սիգիզմունդը՝ չկարողանալով հրաժարուել իր իսկ հաստատած առանձնաշնորհումներէն՝ թոյլ տուեց դատարանին, զանազան պատըրուակներով, ձգձգել դործը աւելի քան երեսուն տարի, երբ միութիւնը կաթոլիկ եկեղեցու հետ արդէն դարձաւ կատարուած փաստ, եւ դատավարութիւնը կորցրեց իր արժէքը :

* * *

Թորոսովիչի տրամադրութեան տակ էին, ի միջի այլոց ե՛ւ Լեհաստանի մտաւոր ուժերը : Լոյս տեսան գրքեր ու գրքոյկներ, որոնք ապացուցանում էին, որ հայերը սկզբնապէս միացած էին հռովմէական եկեղեցուն հետ եւ յետոյ միայն բաժանուել են շնորհիւ Հայաստանը շրջապատող հերձուածող քրիստոնեաների : Իսկ միութեան դէմ ուղղուած միակ գիրքը, որ հրատարակուեց 1628 թ., Թորոսովիչի ապարաստ հակառակորդ եպիսկոպոսական թեկնածու Քրիստափոր Հոլուբովիչի կողմից, գրաւուեց Թորոսովիչի ձեռքով եւ ոչնչացուեց* :

Սակայն եւ այնպէս, չնայած այսպիսի անջակցութեան, հակառակ նոյնիսկ այն բռնութիւններին, որոնց այնպէս ազատ դիմում էին հռովմէական եկեղեցու ներկայացուցիչները, Թորոսովիչի պայքարը հայ համայնքի դէմ կարելի չէր նկատել յաջող : Թէեւ Թորոսովիչը աստիճանաբար գրաւեց հայերից Լվովի բոլոր եկեղեցիները, թէ՛ հոգեւորականութիւնը եւ թէ՛ ամբողջ ժողովուրդը շարունակում էին ապրել առանց այդ եկեղեցիների, առանձին

կրօնական կեանքով եւ չէին վերջացնում պայքարը Թորոսովիչի դէմ* :

«Արդ գրեցաւ Սրբ. Աւետարանս ձեռամբ յողնամէջ Մկրտիչ դպրի. ի թվաբերութեան Հայկազն տումարիս ՌՁԸ (1639) ամի : Ի՛ յերկիրս Իլախաց ի՛ քաղաքս ի Լեվ կոչեցեալ. ի դուռն Սրբ. Աստուածածնին ննջման՝ եւ այլ Սրբ. եկեղեցեացս. ի ժամանակս Հայրապետութեան Սրբ. Էջմիածնա տեառն տեառն Փիլիպպոս կաթողիկոսին եւ թագաւորութեան Իլախաց Չորրորդ Վլատիշլավին : Բայց զառաջնորդ նահանգիս զապստամբեալն ի՛հայրապետէն՝ ոչ համարեցայ արժանի յիշատակել աստ. ոչ եթէ ի բարիս՝ այլ եւ ի՛ նախատինս, քանզի ԲՂՄ եւ անասելի նեղութիւն հասոյց ժողովրդեանն Լեվս, զոր ոչ կամեցա յերկարել» : Macler, Revue des Etudes Arm. T. 7, p. 110.

Հայերը յամառ, թէեւ առանց յաջողութեան, զանգատուում եւ պատգամաւորներ էին ուղարկում ամէն կողմ՝ լեհական թագաւորի, Հռովմի պապի եւ, վերջապէս, իրենց վերջին յոյս ու ապաւէն Էջմիածնի կաթողիկոսի մօտ** :

Թագաւորին ուղղուած զանգատները անցնում էին ապարդիւն, որովհետեւ սկզբում, մինչեւ 1633 թ., նրանք ընկնում էին Սիգիզմունդ Գ. ի ձեռքը, որը ինքն էլ մոլեռանդ կողմնակից էր եկեղեցական միութեան, թէեւ ձեւականօրէն ընթացք տալիս էր զանգատներին, բայց փաստօրէն չէր առարկում, երբ լեհական դատարանները, ձգտում էին լուծումը, եւ միւս կողմից ամէն կերպ ոյժ էին տալիս նրանց, ուղքեր աշխատում էին առաջ բերել միութիւնը : Իսկ 1632 թ. յետոյ, Վլադիսլաւ Գ.

*) Թէ ինչպիսի վերաբերմունք էր ցոյց տալիս հոգեւորականութիւնը դէպի Թորոսովիչը, այդ երեւում է Լվովի համալսարանում պահուած ձեռագիր Աւետարանին (N64) կցուած յիշատակարանից .

***) Այս խառնակ տարիների ընթացքին, Էջմիածնի կաթողիկոսներն էին Մովսէս Գ. (1629-1633), Փիլիպպոսը (1633-1655), Յակովբը (1655-1680), Եղիազարը (1682-1691) եւ Նահապետը (1691-1705) :

*) Գիրքը կրում էր խիստ վճռական վերնադիր. «Հռովմէական կաթոլիկ եկեղեցու այլանդակ եւ գարշահատ մոլորութեան համալսարան եւ ոչնչացում հերձուած», Լվով, 1628 թ. :